ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1787 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 754-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 754-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սահմանվում են օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման հետևյալ տարեկան ընդհանուր չափաքանակները (քվոտաները)՝

Օզոնային շերտը քայքայող նյութեր		
Խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն տարեկան չափաքանակը (մետրիկ տոննա/տարի)

Անվանացանկ A-ի խումբ I, II Անվանացանկ B-ի խումբ I, II, III Անվանացանկ C-ի խումբ II, III Անվանացանկ E-ի խումբ I	2011 թ.-ից սկսած	0
Անվանացանկ C-ի խումբ I	2020-2021 թթ.	82,35
	2022-2024 թթ.	42,31
	2025-2029 թթ.	41,17
	2030-2039 թթ.	3,17
	2040 թ.-ից սկսած	0
Հիդրոֆտորածխածիններ		
Խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն տարեկան չափաքանակը (տոննա CO_2 համարժեքով/տարի)
Անվանացանկ F-ի խումբ I, II	2020-2023 թթ.	անսահմանափակ
	2024 - 2028 թթ.	475,254
	2029 – 2034 թթ.	427,729
	2035 – 2039 թթ.	332,678
	2040 – 2044 թթ.	237,627
	2045 թթ.-ից սկսած	95,051

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ